[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
22	Հունիս	2018 թ.		Բ	0180369883
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
22	Հունիս	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	2	6	3	6	7	8	1		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[10] Անվանումը	«ԱՎ ԷՔՍՊԵՐՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)									
[11] Բանկային տվյալները	Արդշինբանկ				N 2470103343210000					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ԹԻՎ 48									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[16] Բանկային տվյալները					N 900011000834			
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5							
[18] Լրացուցիչ տվյալներ								
[19] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[20] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Հ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	թիվ 57107416 քր գործով դատահաշվապահական և դատատնտեսագիտական փորձաքննություն	հատ	1	400000		400000
Ընդամենը						400000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GRIGORYAN NAREK 1514930757

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

22/06/2018 12:34:00

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Դատահաշվապահական և դատատնտեսագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

«14» օգոստոսի 2017թ. ք.Արմավիր

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության կապիտան Գ.Մանուկյանս, քննարկելով վարույթիս թիվ 57107416 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից սերմերի ձեռքբերման, դրանց որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացման աշխատանքների կատարման համար կազմակերպված գնման գործընթացում պետական շահերի պաշտպանության վիճակը ստուգելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից ուսումնասիրվել են 2012-2013թթ. ընթացքում «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի գնման գործընթացի վերաբերյալ փաստաթղթերը, ինչի արդյունքում ՊՈԱԿ-ի կողմից մատակարարի հետ կնքված պայմանագրերում հայտնաբերվել են խախտումներ՝ ապրանքների մատակարարման ժամկետների և դրանց խախտման համար առաջ եկած տույժերի վերաբերյալ: Բացի այդ՝ պարզվել է, որ ՊՈԱԿ-ում առկա թվով 6 պետական ավտոմեքենաների շահագործման համար դուրս է գրվել ավելի մեծ քանակի վառելիք ավտոմեքենաների կատարած վազքի համեմատ, ինչի արդյունքում ավել հաշվարկված վառելիքի գումարը կազմել է 1,317,568 դրամ:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում 11.03.2016 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 57107416 քրեական գործը:

Քրեական գործով համապատասխան որոշման հիման վրա առգրավվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Սերմերի Գործակալություն» ՊՈԱԿ-ի 2012թ.-ից 2014թ.-նն ընկած ժամանակահատվածի վերաբերյալ՝ ամրակցված ավտոմեքենաների ողջ փաստաթղթերը, այդ թվում՝ վառելիքի և սպասարկման վերաբերյալ, աշխատակիցների պաշտոնը հավաստող փաստաթղթերը, գործուղումների վերաբերյալ լրացված ուղեգրերը, ՊՈԱԿ-ի կանոնադրությունը:

10.05.2016թ.-ին Արմավիրի մարզի դատախազությունից ցուցում է ստացվել մի շարք քննչական գործողություններ կատարելու վերաբերյալ:

Քրեական գործով որպես վկա հարցաքննվել են՝ ՊՈԱԿ-ի տնօրեն Վլադիմիր Համբի Մանուկյանը, տնօրենի առաջին տեղակալներ Համլետ Գառնիկի Խաչատրյանը, Տիգրան Նապոլեոնի Ղալեչյանը, կադրերի տեսուչ Հայարփի Խաչատուրի Սալոյանը, գյուղատնտես-լաբորանտ Շողիկ Մովսեսի Առաքելյանը, լաբորանտ Հասմիկ Ռուբենի Սեյրանյանը, իրավաբան Սերգեյ Գևորգի Մկրտչյանը, գլխավոր գյուղատնտես-սորտափորձարկող Ռուզաննա Ռազմիկի Մխիթարյանը, գլխավոր հաշվապահ Ցոլինե Հակոբի Հեքեքյանը, հաշվապահ Ռոզա Կոլյայի Փարսյանը, վարորդ Սամվել Գեղամի Նալբանդյանը, պահակ Քրիստինե Հարությունի Պետրոսյանը, հավաքարար Շողիկ Տիգրանի Դարբինյանը:

Վլադիմիր Մանուկյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2011թ-ից հանդիսանում է նշված «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի տնօրեն: Կազմակերպությունը զբաղվում է ՀՀ սելեկցիոն նվաճումների իրավական

պահպանմամբ, սերմերի արտադրության և վերարտադրության համակարգի ստեղծմամբ, սորտաթարմացման և սորտափորձարկման աշխատանքներով, բնակլիմայական պայմաններին լավ հարմարվող նոր սորտերի հայտնաբերմամբ և այլն: Նշված խնդիրների իրականացման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կազմված սերմարտադրության և սերմաբուծության 2010-2014թթ. զարգացման ծրագրի շրջանակներում ՌԴ-ի «Սեմենա Ստավրոպոլյա» միավորման հետ կնքված պայմանագրերի հիման վրա ներմուծել են էլիտային վերարտադրության աշնանացան ցորենի սերմացու, որը տրամադրվել է ծրագրով նախատեսված շահառուներին: Այդ նպատակով ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով նախատեսված շահառուների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր, որի հիման վրա շահառուները բերքահավաքից հետո պետք է վերադարձնեին 1-ը 2-ի հարաբերությամբ 1-ին վերարտադրության սերմացու: Շահառու հանդիսացել են այն անձինք, ովքեր այդ բնագավառում ունեցել են փորձ, գիտելիք, համապատասխան քանակությամբ հողատարածք և ցանկացել են ընդգրկվել այդ ծրագրի մեջ: Մինչև պայմանագիր կնքելը, կազմակերպության աշխատակիցները այցելել են շահառուներին, համոզվել, որ վերջիններս իրենց հողատարածքներով և մնացած պայմաններով համապատասխանում են ծրագրին, որից հետո միայն կնքվել են համապատասխան պայմանագրեր և տրամադրվել է սերմացու: Մինչև սերմացուի վերադարձնելը ևս իրենք հսկողություն են իրականացրել գործընթացի նկատմամբ, այցելել են ցանքատարածությունները, ուսումնասիրել դրանք, կատարել ապրոբացիաներ, իսկ ցորենը հավաքելուց հետո շահառուները դրանք զտել, ախտահանել և նմուշը ներկայացրել են գործակալության լաբորատորիաներ, որտեղ կատարված ստուգումներից հետո միայն դրական արդյունքի դեպքում շահառուների կողմից պարկավորված և պիտակավորված սերմերը հանձնվել են գործակալությանը:

2011-2012թթ. «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության հետ կնքված մատակարարման պայմանագրերի կատարման ընթացքում՝ պարտավորությունների կատարման ժամկետները մատակարար ընկերության կողմից խախտելու պատճառով հաշվարկվել է 9081 ԱՄՆ դոլարի չափով տույժ, որի վերաբերյալ 02.08.2013թ.-ին նշված ընկերության հետ կնքվել է նոր պայմանագիր՝ 981.200 ԱՄՆ դոլար արժողության 440.0 տոննա էլիտային վերարտադրության սերմացու ձեռք բերելու վերաբերյալ: Նշված պայմանագրի հիման վրա վճարումները կատարելիս 4400 ԱՄՆ դոլար մատակարարին պակաս է վճարվել՝ հաշվի առնելով նախորդ տարվա ուշացման համար հաշվարկված տույժը, իսկ մնացած 4681 ԱՄՆ դոլարը ընկերությունը վճարել է բանկային փոխանցմամբ:

Վերը նշված ծրագրերի իրականացման նպատակով ՊՈԱԿ-ի աշխատակիցները մեկնել են բազմաթիվ գործուղումների, որոնք իրականացվել են ՊՈԱԿ-ի հաշվեկշռում գտնվող ավտոմեքենաներով, որոնք ամրակցված են եղել համապատասխան աշխատակիցներին: Գործուղումների մեկնելու համար այդ աշխատակիցներին գործուղման հրամանի հիման վրա տրամադրվել է գործուղման ծախսերի հատուցում և համապատասխան քանակության վառելանյութ: Ընդ որում վառելիքը տրամադրվել է ոչ թե ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված նորմաներին համապատասխան, այլ փաստացի կատարված ծախսերի հիման վրա, որի պատճառով էլ որոշակի տարբերություններ են առաջացել: Նորմաները նախատեսված են նոր մեքենաների հաշվարկով, իսկ իրենց կողմից շահագործվող մեքենաների մեծամասնությունը հնամաշ են, ավելի շատ վառելիք են ծախսում, բացի դա գործուղումների ժամանակ մեքենաները մեծամասամբ անցնում են դաշտային

ճանապարհներ, ավելի ցածր արագությամբ, ինչի հետևանքով ծախսն ավելանում է, ինչն էլ հանգեցրել է նորմաներից ավել բենզինի ծախսի:

Հաշվապահ Ցոլինե Հեքեքյանը ցուցմունք է տվել այն մասին, որ իր պարտականությունների մեջ է մտնում ՊՈԱԿ-ի ֆինանսական և հաշվապահական ձևակերպումների իրականացումը: Տնօրենի հրամանով գործուղման մեկնած աշխատակիցները գործուղման ավարտից հետո գործուղման թերթիկները ներկայացնում են հաշվապահություն, որտեղ իրենք ստուգում են գործուղման թերթիկներում անհրաժեշտ տվյալների՝ գործուղման օրերի, գտնվելու վայրերի, համապատասխան հանդիպակաց ընկերությունների կամ հիմնարկների աշխատակիցների կնիքների և ստորագրությունների առկայությունը, որից հետո հաշվարկում են օրապահիկի, գիշերավարձի գումարը, որը բանկային փոխանցումով վճարում են գործուղված անձին: Բանկային բոլոր փոխանցումներն ու աշխատավարձի հաշվարկը կատարվում է իր կողմից: ՊՈԱԿ-ի գնումների գծով մասնագետ Անդրանիկ Սիմոնյանը ՊՈԱԿ-ի ավտոմեքենաների մասով կատարում է համապատասխան հաշվարկ ամսեկան կտրվածքով կատարված ծախսի հիման վրա, որը հաստատվում է տնօրենի ստորագրությամբ և կնիքով, այն ներկայացնում է հաշվապահություն, դրա հիման վրա հաշվապահությունում կազմվում է պահանջագիր, որի հիման վրա էլ վառելիքը դուրս է գրվում կտրոններով:

Հարցաքննվել են ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցները, այդ թվում այն անձինք, ում ամրակցված են եղել ավտոմեքենաները:

Պարզվել է, որ ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի հաշվեկշռում գտնվող ՎԱԶ 21214 մակնիշի 022 OO 62 համարանիշի ավտոմեքենան 01.01.2012-31.12.2014թթ.-ն ընկած ժամանակահատվածում ամրակցված է եղել Գեղարքունիքի մարզային կառույցի ղեկավար Միշա Գալոյանին, Վազ 21214 մակնիշի 029 OO 62 համարանիշի ավտոմեքենան՝ տնօրենի տեղակալ Համլետ Խաչատրյանին, Վազ 21214 մակնիշի 150 LU 61 համարանիշի ավտոմեքենան՝ Սյունիքի մարզային կառույցի ղեկավար Սևադա Իվանյանին, ՎԱԶ 21214 մակնիշի 152 LU 61 համարանիշի ավտոմեքենան 2012թ.-ին շահագործվել է 09.01.2012-14.05.2012թթ.-ն ընկած ժամանակահատվածում, ամրակցված է եղել տնօրեն Վլադիմիր Մանուկյանին, 2013թ.-ին՝ վարորդ Արթուր Թաթոսյանին, 2014թ. հունվար ամսին՝ վարորդ Արթուր Թաթոսյանին, փետրվար-հուլիս ամիսներին՝ գնումների գծով մասնագետ Անդրանիկ Սիմոնյանին, իսկ օգոստոս-դեկտեմբեր ամիսներին՝ վարորդ Էմիլ Մակարյանին: Վազ 21214 մակնիշի 153 LU 61 համարանիշի ավտոմեքենան 2012-2014թթ. ընկած ժամանակահատվածում ամրակցված է եղել Լոռու մարզային կառույցի ղեկավար Արթուր Մարիկյանին, Վազ 21214 մակնիշի 388 UL 61 համարանիշի ավտոմեքենան 01.01.2012-15.11.2012թթ.-ն ընկած ժամանակահատվածում ամրակցված է եղել գլխավոր հաշվապահ Ռուբեն Հակոբյանին, 16.11.2012-30.09.2013թթ.-ն ընկած ժամանակահտվածում՝ գնումների գծով մասնագետ Անդրանիկ Սիմոնյանին, իսկ 01.10.2013-31.12.2014թթ.-ն ընկած ժամանակահատվածում՝ տնօրենի խորհրդական Սերգեյ Մկրտչյանին: Գազ 31105 մակնիշի 126 LL 11 համարանիշի ավտոմեքենան 01.01.2012-31.07.2014թ.-ն ընկած ժամանակահատվածում ամրակցված է եղել տնօրեն Վլադիմիր Մանուկյանին, իսկ 01.08.2014-31.12.2014թթ.-ն ընկած ժամանակահատվածում՝ գնումների գծով մասնագետ Անդրանիկ Սիմոնյանին: Գազել մակնիշի 712 OO 62 համարանիշի ավտոմեքենան 2012-2014թթ.-ն ընկած ժամանակահատվածում ամրակցված է եղել վարորդ Սամվել Նալբանդյանին, իսկ

Չորրդ մակնիշի 395 LL 11 համարանիշի ավտոմեքենան շահագործվել է 01.08.2014թ.-ից սկսած և ամրակցված է եղել տնօրեն Վլադիմիր Մանուկյանին:

Նախաքննության ընթացքում առգրավվել է նաև 2012թ.-ից մինչև 2015թ. հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող ավտոմեքենաների վարորդների ամենամյա արձակուրդ մեկնելու հրամանների բնօրինակները:

Պարզվել է նաև, որ 2014թ. մարտի 20-ից մինչև 2014թ. ապրիլի 4-ը ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչությունը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում իրականացրել է ՀՀ պետբյուջեից հատկացված և ծախսված գումարների ճշտության ստուգում՝ 2011-2013թթ և 2014թ. 1-ին եռամսյակն ընկած ժամանակաշրջանի համար և հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվել է թիվ 24-Ա ակտը:

Բացի այդ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում իրականացվել է 2010-2012թթ. համակարգի գնահատման աուդիտորական ստուգում և կազմվել համապատասխան հաշվետվություն:

Քրեական գործի նախաքննության ընթացքում 09.08.2016թ.-ին նշանակվել է ֆինանսատնտեսական գործունեության ստուգում, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ՖՆ աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչությանը:

Տեսչության համապատասխան մասնագետներին առաջադրվել են հետևյալ հարցերը.

- *2012թ.-ից մինչև 2014թ. -ը ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին պետական բյուջեի միջոցների հաշվին որքան գումար է հատկացվել վառելիքի (բենզին, գազ), քսայուղերի համար, դրանց փաստաթղթավորումը կատարվել է գործող իրավական ակտերին համապատասխան, թե՝ ոչ, և դրանից որքան գումարն է ծախսվել ըստ ուղղությունների, դրանց համապատասխան փաստաթղթավորումները կատարվել են, թե ոչ:*
- *ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում 2012թ.-ից մինչև 2014թ. -ը պետական բյուջեի հաշվին ձեռք բերված վառելիքի (բենզին, գազ), քսայուղերի համար նախատեսված որքան գումար է ծախսվել ՊՈԱԿ-ի միջոցներից, ծախսերը կատարվել են նպատակային, թե՝ ոչ, վառելիքը օգտագործվել է կազմակերպության կարիքների համար, թե ոչ, դրանց վերաբերյալ փաստաթղթավորումը կատարվել է գործող իրավական ակտերին համապատասխան, թե՝ ոչ, բացի այդ դրանք արտացոլված են հաշվետվություններում կամ այլ փաստաթղթերում, թե՝ ոչ, եթե ոչ, ապա չարաշահումների հետևանքով, որքան գումար է հափշտակվել, ում կողմից, որքան է կազմում դրա հետևանքով պետությանը պատճառված վնասի չափը և ով է պատասխանատու դրա համար:*
- *ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում 2012թ.-ից մինչև 2014թ.-ը ՊՈԱԿ-ին ամրակցված քանի ավտոմեքենա է եղել, յուրաքանչյուր ավտոմեքենայի սպասարկման այդ թվում անվադողերի, մարտկոցների, յուղերի և այլ պահեստամասերի ձեռք բերման համար նախատեսված որքան գումար է ծախսվել ՊՈԱԿ-ի միջոցներից, ծախսերը կատարվել են նպատակային, թե՝ ոչ, դրանց վերաբերյալ փաստաթղթավորումը կատարվել է գործող իրավական ակտերին համապատասխան, թե՝ ոչ, բացի այդ դրանք արտացոլված են հաշվետվություններում կամ այլ փաստաթղթերում, թե՝ ոչ, եթե ոչ, ապա չարաշահումների հետևանքով, որքան գումար է հափշտակվել, ում կողմից, որքան է կազմում դրա հետևանքով պետությանը պատճառված վնասի չափը և ով է պատասխանատու դրա համար:*

➢ *ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում 2012թ.-ից մինչև 2014թ.-ը քանի աշխատակից է մեկնել արձակուրդ, քանի աշխատակից է հետ կանչվել արձակուրդից, արձակուրդի համար որքան գումար է ծախսվել ՊՈԱԿ-ի միջոցներից, ծախսերը կատարվել են նպատակային, թե՝ ոչ, փաստաթղթավորումը կատարվել է գործող իրավական ակտերին համապատասխան, թե՝ ոչ, ինչպես նաև դրանք արտացոլված են հաշվետվություններում կամ այլ փաստաթղթերում, թե՝ ոչ, եթե ոչ, ապա չարաշահումների հետևանքով, որքան գումար է հափշտակվել, ում կողմից և ով է պատասխանատու դրա համար:*

➢ *2012թ.-ից մինչև 2014թ.-ը ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում գործուղումների վերաբերյալ փաստաթղթերը, գործուղման թերթիկները, ավտոմեքենաների ուղեգրերը ճիշտ են ձևակերպվել, թե ոչ, կեղծիքներ կամ թվային անհամապատասխանություններ թույլ տրվել են, թե ոչ, եթե այո ապա, երբ, ինչ եղանակով ում կողմից են չարաշահումներ թույլ տրվել, ով է դրա համար պատասխանատու անձը և որքան է կազմում դրա հետևանքով պետությանը պատճառված վնասի չափը:*

➢ *Արդյոք 2012թ.-ից մինչև 2014թ.-ը ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին ամրակցված ավտոմեքենաների ուղեգրերում նշված երթուղիների հեռավորությունը, վառելիքի ծախսը և վազքաչափը համապատասխանում են իրար, բացի այդ բնակավայրերի տեղակայումը և ուղեգրերում նշված երթուղիների հեռավորությունը ճիշտ է արձանագրված գործուղման թերթիկներում և ուղեգրերում, թե ոչ, եթե ոչ, ապա ով է դրա համար պատասխանատու և ինչ չարաշահումներ են, թույլ տրվել:*

➢ *2012թ.-ից մինչև 2014թ.-ը ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի համապատասխան ներկայացուցիչների կողմից գործուղումներ մեկնելու կարգը խախտվել է, թե ոչ, դրանք նպատակային են եղել, թե ոչ, գործուղումների համար հատկացված գումարները և ավտոմեքենաների ծախսերը /համաձայն վազքաչափերի/ համապատասխանում են, թե ոչ, եթե առչ, ապա դրանց արդյունքում չարաշահումներ թույլ տրվել են, թե ոչ և չարաշահումների հետևանքով, որքան գումար է հափշտակվել, ում կողմից, որքան է կազմում դրա հետևանքով պետությանը պատճառված վնասի չափը և ով է պատասխանատու դրա համար:*

➢ *Հայտնաբերված չարաշահումների դրսևորման ընթացքում ՀՀ պետական բյուջեին պատճառված վնասի չափը ընդհանուր առմամբ որքան է կազմում, ում կողմից է կոնկրետ թույլ տրվել անգործություն, ոչ պատշաճ հսկողություն կամ օժանդակություն չարաշահումներին, նշել կոնկրետ պաշտոնատար անձին կամ լիազորված գերատեսչության ղեկավարին:*

➢ *2012թ.-ից մինչև 2014թ.-ը ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ օրենքով իրեն վերապահված հարկային պարտավորությունները կատարել է, թե ոչ:*

01.11.2016թ.-ին ստացվել է 21.10.2016թ.-ին կազմված ստուգման թիվ 17-Ա ակտը, որի համաձայն՝

1. Ուղեգրերով փաստացի վազքի կիլոմետրաժին համապատասխան դուրս գրված բենզինի ծավալի և ՀՀ Կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշմամբ սահմանված նորմաների համադրմամբ արձանագրվել է ավել ցույց տրված բենզինի ծախս 489լ՝ 215.200 դրամի չափով, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե :

2. ՊՈԱԿ-ին ամրագրված ՎԱԶ-21214 մակնիշի 029 oo 62 պետհամարանիշի ավտոմեքենայի ուղեղրերով ավել բենզինի ծախս է ցույց տրվել ընդամենը 38.5լ՝ 16.900 դրամի չափով, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

3. ՊՈԱԿ-ի աշխատակիցներ Համլետ Խաչատրյանին և Ռուզաննա Մխիթարյանին ավել գիշերավարձ է հաշվարկվել և վճարվել 1 օրվա համար յուրաքանչյուրին 5.000 դրամի չափով: Արձանագրված 10.000 դրամը ենթակա է վերականգնման ՊՈԱԿ-ի հաշվին:

4. ՊՈԱԿ-ին ամրակցված ԳԱԶ-31105-120 մակնիշի 126 ու 11 պետհամարանիշի ավտոմեքենայի ուղեգրերում նշված երթուղիների և գործողման թերթիկներում նշված գործուղման վայրերի միջև արձանագրվել են տարբերություններ: Գործուղման ժամանակահատվածում նշված ավտոմեքենայի ուղեգրերով բենզինի ծախս է ցույց տրվել ընդամենը 383.5լ՝ 170.600 դրամի չափով:

Նույն ժամանակահատվածում Շիրակի մարզում և ՀՀ այլ մարզերում գործողման մեջ գտնվող Ս.Նալբանդյանին ամրակցված ԳԱԶ-322132-418 մակնիշի 712 oo 62 պետհամարանիշի ավտոմեքենան շահագործվել է այլ ուղղություններով, սակայն ուղեգրերը ստորագրվել են վերջինիս կողմից : Տվյալ ժամանակահատվածում նշված ավտոմեքենայի ուղեգրերով բենզինի ծախս է ցույց տրվել ընդամենը 39լ՝ 17.400 դրամի չափով և բնական գազի ծախս 166.3 խմ՝ 33.300 դրամի չափով:

ՊՈԱԿ-ի աշխատակից Արթուր Թաթոսյանը (վարորդ) 14.08.2013-25.10.2013թթ. ընկած ժամանակահատվածում գտնվել է չվճարվող արձակուրդում, սակայն նրան ամրակցված Վազ-21214 մակնիշի 152 ու 61 պետհամարանիշի ավտոմեքենայի ուղեգրով 14.08.2013-31.08.2013թթ. ընկած ժամանակահատվածի համար վազք է ցույց տրվել ընդամենը 966կմ (Երևան, Մերձավան և Բաղրամյանի տարածաշրջան), որին համապատասխան ելքագրվել է 116լ բենզին՝ 48.700 դրամ արժեքի չափով:

ՊՈԱԿ-ի աշխատակից Արթուր Մարիկյանը (Լոռու մարզի կառույցի ղեկավար) 24.11.2014-19.12.2014թթ. ընկած ժամանակահատվածում գտնվել է արձակուրդում, սակայն նրան ամրակցված ՎԱԶ 21214 մակնիշի 153 ու 61 պետհամարանիշի ավտոմեքենայի ուղեգրով նույն օրերի համար վազք է ցույց տրվել ընդամենը 2187 կմ, որին համապատասխան ելքագրվել է 317,2 լ բենզին՝ 142.700 դրամի չափով :

Արդյունքում ավել ելքագրվել է 433.2 լ (116+317.2) բենզին 191.400 (48.700+142.700) դրամ արժեքով, որը ենթակա է վերականգման ՀՀ պետական բյուջե:

Ստուգման ակտն ստացվելուց հետո թիվ 57107416 քրեական գործն ուղարկվել է Արմավիրի մարզի դատախազություն՝ քրեական գործի նախաքննության նկատմամբ հսկողություն և դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին:

18.11.2016թ. քրեական գործը հետ է վերադարձվել և դատախազի կողմից ցուցում է տրվել կատարելու մի շարք քննչական և այլ դատավարական գործողություններ:

Ցուցումի պահանջները կատարելու նպատակով առգրավվել են 2012-2014թթ. ընկած ժամանակահատվածում «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից սուպեր էլիտային և էլիտային տեսակի սերմացուի տրամադրման վերաբերյալ շահառուների հետ կնքված պայմանագրերը, ինչպես նաև առաջին վերարտադրության սերմացուն նույն ժամանակահատվածում ՀՀ բոլոր մարզերի բնակիչներին տրամադրելու նպատակով մարզպետների հետ կնքված պայմանագրերը:

Առգրավված պայմանագրերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2012թ.-ին ՀՀ բոլոր մարզերին ընդհանուր առմամբ տրամադրվել է 2741 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, որի համար ենթակա է եղել վերադարձման 438.560.000 դրամ, փաստացի վերադարձվել է 398.748.700 դրամ, պարտքը կազմում է 39.811.300 դրամ: 2013թ.-ին մարզերին տրամադրվել է 3809,2 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, որի համար ենթակա է եղել վերադարձման 494.851.200 դրամ, փաստացի վերադարձվել է 417.933.800 դրամ: ՀՀ Կառավարության 19.11.2015թ. N 1357-Ա որոշմամբ՝ կարկտահարության հետևանքով ցանքատարածությունների վնասման պատճառով, Լոռու մարզի բնակիչների 13.305.600 և Շիրակի մարզի բնակիչների 101.315.200 դրամ պարտքը ներվել է, փաստացի պարտքը կազմում է 114.620.800 դրամ: 2014թ.-ին մարզերին տրամադրվել է 1889 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու, որի համար ենթակա է եղել վճարման 462.240.000 դրամ, փաստացի վերադարձվել է 302.252.000 դրամ: ՀՀ Կառավարության 19.11.2015թ. N 1357-Ա որոշմամբ Լոռու մարզի բնակիչների 20.808.000 և Շիրակի մարզի բնակիչների 191.016.000 դրամ պարտքը ներվել է, փաստացի պարտքը կազմում է 211.824.000 դրամ:

Վերը նշված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուն համապատասխան մարզպետների հետ կնքված պայմանագրերի հիման վրա տրամադրվել է այդ մարզպետարաններին, որտեղից էլ կատարվել է սերմացուի բաշխումը բնակիչներին: ՌԴ-ից ներկրված աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացուն 2012թ.-ին հատկացվել է հանրապետության 175 շահառուների, որոնց հետ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից կնքվել են համապատասխան պայամանագրեր: Տրամադրվել է 730 տոննա սերմացու, 2013թ. ին նույն տեսակի սերմացու տրամադրվել է թվով 126 շահառուների՝ ընդհանուրը 440 տոննա սերմացու ներկրված ՌԴ-ից, իսկ 103,1 տոննա՝ շահառուներից նախորդ տարի հետ գնված սերմացուից: 2014թ.-ին տրամադրվել է 72 շահառուի, 263,79 տոննա քաշով սերմացու, որն ամբողջությամբ եղել է նախորդ տարի շահառուներից ձեռք բերված սերմացուն:

2012-14թթ. ընկած ժամանակահատվածում էլիտային և սուպերէլիտային սերմացու ստացած բոլոր շահառուներին հարցաքննելու նպատակով կազմվել և համապատասխան քննչական վարչություններ ուղարկվել են քննչական հանձնարարություններ, ստացվել են պատասխանները, որոնց արդյունքներով ՊՈԱԿ-ի աշխատակիցների գործողություններում խախտումներ չեն հայտնաբերվել: Հարցաքննված բոլոր շահառուները հայտնել են, որ ստացել են պայմանագրով սահմանված քանակության էլիտային և սուպեր էլիտային վերարտադրության սերմացուներ, պայմանագրով սահմանված ցանել են այն իրենց պատկանող կամ իրենց կողմից փաստացի օգտագործվող հողամասերում, իսկ ստացված բերքից սերմացուի կրկնակի չափով վերադարձրել են գործակալությանը:

Կատարվել է նաև համեմատական զննություն՝ 2012-14թթ.-ն ընկած ժամանակահատվածում շահառուներին հանձնված և հետ ընդունված ցորենի սերմացուի քանակի վերաբերյալ կազմված հաշիվ ապրանքագրերով, որի արդյունքում պարզվել է, որ 2012-13թթ.-ին սերմացու ստացած բոլոր շահառուները ստացած ցորենի սերմացուի կրկնակի չափով վերադարձրել են իրենց ստացած բերքից:

2014թ.-ին տրամադրված ցորենի սերմացուի դիմաց կրկնակի չափով վերադարձրել են ոչ բոլոր շահառուները: Ստացված ցորենի սերմացուի համար

գործակալության նկատմամբ պարտավորություններ ունեն Սևան քաղաքի բնակիչ Օնիկ Սարգսյանը, Հրազդան քաղաքի բնակիչներ Անդրանիկ Պետրոսյանը և Վարդանիկ Մարգարյանը և Լոռու մարզի Լուսագբյուր գյուղի բնակիչ Մանվել Խաչատրյանը: Օնիկ Սարգսյանին 17.09.2014թ. կնքված պայմանագրի հիման վրա տրամադրվել է 2.500կգ սերմացու, որի դիմաց նա 2015թ.-ին պետք է վերադարձներ 5.000 կգ առաջին վերարտադրության սերմացու, սակայն վերջինս սերմացուն չի վերադարձրել: Օնիկ Սարգսյանի դեմ հայց է ներկայացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, որի 27.10.2016թ.-ի վճռով որոշվել է բռնագանձել սերմացուի դիմաց վճարվելիք 950.000 ՀՀ դրամ գումարը, վճիռը ներկայացվել է հարկադիր կատարման: Վարդանիկ Մարգարյանին 09.09.2014թ. կնքված պայմանագրի հիման վրա տրամադրվել էր 2.400 կգ էլիտային վերարտադրության սերմացու, որի դիմաց պետք է վերադարձներ 4.800 կգ առաջին վերարտադրության սերմացու, սակայն չի վերադարձրել: Ընդդեմ Վարդանիկ Մարգարյանի ևս հայց է ներկայացվել դատարան, գործի քննության ընթացքում շահառուի հետ կնքվել է հաշտության համաձայնագիր, սահմանվել է ժամանակացույց, որի հիման վրա Վ.Մարգարյանն արդեն իսկ վճարել է 250.000 դրամ, մնացածն էլ ըստ ժամանակացույցի պարտավորվել է վճարել մինչև 2018թ.-ը: Անդրանիկ Պետրոսյանին 09.09.2014թ. կնքված պայմանագրի հիման վրա տրամադրվել է 3.000 կգ էլիտային վերարտադրության սերմացու, որի դիմաց պետք է վերադարձներ 6.000 կգ առաջին վերարտադրության սերմացու, ինչը չի վերադարձրել: Պարտքը կազմել է 1.140.000 ՀՀ դրամ, որի բռնագանձման նպատակով Անդրանիկ Պետրոսյանի դեմ ևս ներկայացվել է հայցադիմում, սակայն դատաքննության ընթացքում նրա հետ ևս կնքվել է հաշտության համաձայնություն: Դրա հիման վրա Անդրանիկ Պետրոսյանն արդեն վճարել է 320.000 ՀՀ դրամ, իսկ մնացած պարտքը պետք է մարի մինչև 2018թ.: Շահառու Մանվել Խաչատրյանին 25.09.2014թ. կնքված պայմանագրի հիման վրա տրամադրվել է 3.300 կգ էլիտային վերարտադրության սերմացու, նա պետք է վերադարձներ 6.600 կգ, կամ 1.254.000 դրամ, Մանվել Խաչատրյանը մահացել է, նրա իրավահաջորդ ճանաչվել է կինը՝ Անահիտ Աշուղաթոյանը, ով արդեն վճարել է 1.093.000 դրամ, իսկ մնացածը պարտավորվել է վճարել 2018թ.-ը:

ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Վ.Մանուկյանը լրացուցիչ ցուցմունքին կից ներկայացրել է նաև ցորենի սերմացուի հետ վերադարձից հետո հաշիվ-ապրանքագրերի վրա կազմված համապատասխան հանձնման-ընդունման արձանագրությունները, որոնցով համեմատական զննություն է կատարվել տրամադրված սերմացուի վերաբերյալ կազմված փաստաթղթերի հետ և պարզվել է, որ վերադարձ չի իրականացվել միայն վերը նշված 4 շահառուների կողմից:

Քրեական գործի նախաքննության ընթացքում ցուցումի պահանջները բավարարելու և ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների գործուղման փաստաթղթերում և նրանց ամրակցված ավտոմեքենաների երթուղային թերթիկներում նշված ուղղությունների համապատասխանությունը պարզելու նպատակով կատարվել է համեմատական զննություն, որի ընթացքում ՊՈԱԿ-ի աշխատակիցների՝ 2012-14թթ. ընկած ժամանակահատվածի բոլոր գործուղումներն ըստ տարիների համակարգվել են առանձին աղյուսակներում՝ ըստ ավտոմեքենաների, իսկ առանց ավտոմեքենաների գործուղված աշխատակիցների վերաբերյալ տվյալները խմբավորվել են առանձին աղյուսակներում: Դրանից հետո նույն աղյուսակներում առանձնացված սյունակներով ներկայացվել են գործուղումներն ընդգրկող ժամանակահատվածում երթուղային թերթիկ-ուղեգրերում ֆիքսված տվյալները, կատարվել են վերոնշյալ տեղեկատվության համակարգային վերլու-

ծություններ ու համեմատություններ, հայտնաբերված անհամապատասխանությունները, ինչպես նաև քննության համար հետաքրքրություն ներկայացնող մյուս տվյալները (ջնջումներ, ուղղումներ և այլն) ֆիքսվել են առանձին տողերով: Կազմված աղյուսակները համապատասխան նշագրումներով կցվել են վերոնշյալ զննության արձանագրությանը՝ որպես բաղկացուցիչ մաս:

Բացի դա, զննության ընթացքում համեմատվել են նաև նույն ժամանակահատվածում ՊՈԱԿ-ի աշխատակիցների արձակուրդ մեկնելու և արձակուրդից հետ կանչելու վերաբերյալ հրամանները, դրանց տվյալները համեմատվել են ավտոմեքենաների երթուղային թերթիկներում նշված տվյալների հետ, որի արդյունքում հայտնաբերվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- Տնօրենի տեղակալ Համլետ Խաչատրյանը 30.12.2011թ.-ից մինչև 11.01.2012թ. /ներառյալ/ ժամանակահատվածում փաստացի գտնվել է ամենամյա հերթական արձակուրդում, սակայն նրան ամրակցված Վազ 21214 կամնիշի 029 ՕՕ 62 համարանիշի ավտոմեքենան, ըստ երթուղային թերթ-ուղեգրի տվյալների, այդ նույն ժամանակահատվածում՝ 09.01.12թ.-ից մինչև 11.01.2012թ., շահագործվել է Մերձավան-Երևան քաղաքում-Մերձավան ուղղություններով, համապատասխանաբար՝ 52կմ, 61 կմ և 39 կմ վազքաչափերով, **ընդհանուր վազքաչափը՝ 152 կմ:**

- Վարորդ Սամվել Նալբանդյանը 2012թ. հուլիսի 2-ից մինչև հուլիսի 30-ը ներառյալ, փաստացի գտնվել է արձակուրդի մեջ, սակայն նրան ամրակցված ԳԱԶ 322132 մակնիշի 712 ՕՕ 62 համարանիշի ավտոմեքենայի երթուղային թերթ-ուղեգրում 2012թ. հուլիսի 2-ից մինչև հուլիսի 30-ը ներառյալ արձանագրվել են վազքեր՝ **ընդհանուրը 2240կմ:**

- Տնօրենի տեղակալ Համլետ Խաչատրյանը 29.12.2014թ.-ից մինչև 16.01.2015թ. փաստացի գտնվել է արձակուրդում, սակայն նրան ամրակցված Վազ 21214 մակնիշի 029 ՕՕ 62 համարանիշի ավտոմեքենայի երթուղային թերթիկում արձանագրվել է վազք

2014թ. դեկտեմբերի 29-ին և 30-ին Երևան-Մերձավան-Երևան ուղղություններով, համապատասխանաբար 31կմ և 28կմ, **այսինքն՝ ընդհանուրը 59 կմ**:

Այնինչ, ստուգում նշանակելու մասին որոշման համապատասխան հարցի կապակցությամբ կատարված ուսումնասիրությամբ (արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում համապատասխան աշխատակիցներին ամրակցված ավտոմեքենաների ուղեգրերով դուրս գրված վառելիքի ծախսի ստուգմամբ) թիվ 17-Ա ակտում արձանագրվել է միայն հետևյալը՝ «ՊՈԱԿ-ի աշխատակից Արթուր Թաթոսյանը (վարորդ) 14.08.2013-25.10.2013թթ. ընկած ժամանակահատվածում գտնվել է չվճարվող արձակուրդում, սակայն նրան ամրակցված Վազ 21214 152 LU 61 պետհամարանիշի ավտոմեքենայի ուղեգրով 14.08.2013-31.08-2013թթ. ընկած ժամանակահատվածի համար վազք է ցույց տրվել ընդամենը 966կմ (Երևան, Մերձավան և Բաղրամյանի տարածաշրջան), որին համապատասխան ելքագրվել է 116լ բենզին 48.7 հազ. դրամ արժեքի չափով»:

Ստուգում նշանակելու մասին 09.08.2016թ. որոշմամբ պահանջվել է ստուգմամբ պարզել, թե 2012թ.-ից մինչև 2014թ.-ը ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում գործուղումների վերաբերյալ փաստաթղթերը, գործուղման թերթիկները, ավտոմեքենաների ուղեգրերը ճիշտ են ձևակերպվել, թե ոչ, կեղծիքներ կամ թվային անհամապատասխանություններ թույլ տրվել են, թե ոչ, եթե այո ապա, երբ, ինչ եղանակով ում կողմից են չարաշահումներ թույլ տրվել, ով է

դրա համար պատասխանատու անձը և որքան է կազմում դրա հետևանքով պետությանը պատճառված վնասի չափը:

Սակայն նշված հարցին ստուգմամբ լիարժեք պատասխան չի տրվել, փոխարենը ակտի նկարագրական մասում այդ հարցի կապակցությամբ նշվել է, որ 2012-2014թթ. ընթացքում ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից տրված գործուղման հրամաններում հաշվի առնելով աշխատանքի բնույթը, որպես գործուղման վայր նշված է համապատասխան մարզը, առանձին դեպքերում գործուղման թերթիկներում բացակայում են հանդիպակաց կազմակերպության համապատասխան անձի ստորագրությունը և կնիքը, իսկ ավտոմեքենաների ուղեգրերում երթուղիները նշված են տվյալ մարզի կամ Երևան քաղաքի տարածքում կատարված վազքի չափը ներառյալ: Նշվածի արդյունքում ավտոմեքենաների կատարված վազքը ըստ բնակավայրերի հեռավորության հնարավոր չէ պարզել: Միաժամանակ արձանագրվել է, որ նշված հարցերը, ինչպես նաև վերը նշված ավտոմեքենաների կատարած երթուղիների, վազքի արժանահավատությունը կարող է պարզաբանվել միայն քննությամբ:

Նշված հարցը քննչական ճանապարհով պարզելու նպատակով, ինչպես վերը նշվեց, կատարվել են համեմատական զննություններ, որի արդյունքում հայտնաբերվել են մի շարք անհամապատասխանություններ:

Քանի որ քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով պարզվել է, որ թիվ 17-Ա ստուգման ակտում ոչ բոլոր հարցերին են տրվել լիարժեք պատասխաններ, հետևաբար անհրաժեշտություն է առաջացել հիշյալ հարցերը վերստուգման առարկա դարձնել՝ քննչական ճանապարհով պարզված վերոնշյալ անհամապատասխանությունների մասով, ուստի 10.03.2017թ.-ին նշանակվել է ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեության վերստուգում, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ՖՆ ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության մասնագետներին: Վերջիններիս առաջադրվել են հետևյալ հարցերը.

- Նախաքննության ընթացքում կատարված զննությամբ ֆիքսված անհամապասխանությունների համար ով կամ ովքեր են պատասխանատու /նաև նշել համապատասխան գործընթացի կապակցությամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող պատասխանատու անձանց/, կոնկրետ ինչում է կայացել չարաշահումը, դրա արդյունքում կազմակերպությանը և պետությանը վնաս պատճառվել է, թե՝ ոչ, որքան է կազմում պատճառված վնասի չափը /մի դեպքում որպես ելակետ համարել այն, որ գործուղման փաստաթղթերում արտացոլված է իրականությունը, իսկ երթուղային թերթ-ուղեգրերի տվյալներն են խեղաթյուրված, իսկ մյուս դեպքում՝ հակառակը/ :

Կատարված զննությամբ հայտնաբերված անհամապատասխանությունների մասով հարցաքննվել են ՊՈԱԿ-ի այն աշխատակիցները, ովքեր նշված ժամանակահատվածում ունեցել են իրենց ամրակցված ավտոմեքենաներ: Մասնավորապես, հարցաքննվել են վկաներ Համլետ Խաչատրյանը, Արթուր Մարիկյանը, Սևադա Իվանյանը, Արթուր Թաթոսյանը, Սերգեյ Մկրտչյանը, Սամվել Նալբանդյանը և Անդրանիկ Սիմոնյանը: Վերջիններս հերքել են գործուղման թերթիկներում և երթուղային թերթ-ուղեգրերում դիտավորյալ կերպով խեղաթյուրումներ մտցնելու հանգամանքը, իսկ արձանագրված անհամապատասխանությունները մեկնաբանել են որպես անփութության և անուշադրության արդյունք:

11.03.2017թ.-ին գործով վարույթը կասեցվել է գործով որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով, գործն ուղարկվել է Արմավիրի մարզի դատախազություն՝ որոշման օրինականությունը ստուգելու համար:

21.03.2017թ.-ին թիվ 57107416 քրեական գործը գրությամբ վերադարձվել է ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչություն՝ քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու և նախաքննությունը շարունակելու վերաբերյալ գրավոր ցուցումով: Նույն օրը քրեական գործով կասեցված վարույթը վերսկսվել է:

Բացի գործով վարույթը վերսկսելու և նախաքննությունը շարունակելու մասին ցուցումից, քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն և դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից տրվել է նաև մի շարք այլ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ ցուցում:

Հայտնաբերված անհամապատասխանությունների առկայության և դրանք ստուգման ակտում չարտացոլելու և մի շարք այլ հարցերի կապակցությամբ հարցաքննվել են նաև ստուգումն իրականացրած ՀՀ ՖՆ ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության աշխատակիցները, ովքեր հայտնել են, որ ստուգման առարկա դարձրել են միայն այն դրվագները, որոնց վերաբերյալ քրեական գործի նյութերում արդեն իսկ առկա են եղել համապատասխան նշում՝ որպես խախտում արձանագրված լինելու մասին, իսկ մնացած անհամապատասխանությունները, որոնք հայտնաբերվել են զննության ընթացքում, մինչ այդ գործի նյութերում նշված չեն եղել և ստուգմանը չեն տրամադրվել: Իսկ հաշվի առնելով ստուգման ժամկետի խիստ սահմանափակ լինելը, ինչպես նաև նշված անհամապատասխանությունները պարզելու համար հետազոտման ենթակա փաստաթղթերի մեծ ծավալը, ուստի ստուգման ընթացքում նման հետազոտություն հնարավոր չի եղել իրականացնել՝ ստուգման ակտում անդրադարձ կատարելով միայն գործի նյութերում արդեն իսկ ֆիքսված խախտումների արդյունքում վերականգնման ենթակա գումարի հաշվարկի կատարմանը:

29.03.2017թ.-ին ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչությունից ստացել է գրություն, որի համաձայն՝ ***10.03.2017թ. «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում վերստուգում նշանակելու մասին որոշման վերաբերյալ հայտնվում է, որ որոշմամբ առաջադրված հարցերը, մասնավորապես՝ անձի կոնկրետ արարքը որպես անհամապատասխանություն որակելը, ըստ էության դուրս են թե՛ ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությամբ, թե՛ տեսչության կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակից:***

Միաժամանակ, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ վերստուգումներ անցկացնելու հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով բացակայում է այնպիսի կարգավորում, որը կպարտավորեցնի վերստուգումներ իրականացնելու պարագայում այն հանձնարարել ստուգում իրականացնող այլ անձանց:

Ավտոտեխսպասարկման մեջ գտնվելու ընթացքում վազքաչափերի արձանագրման վերաբերյալ կատարված քննության շրջանակներում հարցաքննվել է «Բաշ Ապարան» ՍՊԸ-ի տնօրեն Դավիթ Ղազարյանը, ով հայտնել է, որ աշխատանքների կատարումից հետո կազմվել են համապատասխան հանձնման – ընդունման արձանագրություններ, որոնցում նշվել են կատարված բոլոր աշխատանքները, դրանց արժեքը, վճարման ենթակա գումարը, ինչպես նաև աշխատանքների կատարման ժամանակահատվածը: Դ.Ղազարյանը նշել է, որ

աշխատանքները հիմնականում կատարվել են հենց այն օրերին, ինչ նշված է հանձնման ընդունման արձանագրություններում, իսկ այդ օրերին տեխսպասարկման ենթարկված ավտոմեքենաները գտնվել են տեխսպասարկման կետում և հիմնականում չեն շահագործվել: Դ.Ղազարյանը չի բացառել, որ որոշ դեպքերում, երբ աշխատանքները մեծ ծավալ չեն ունեցել, ժամանակատար չեն եղել, հնարավոր է այդ օրերին մեքենաները շահագործված լինեն, սակայն հիմնականում տեխսպասարկման ենթարկելու օրերին դրանք չեն շահագործվել:

Կատարվել է փաստաթղթերի զննություն, որի ընթացքում համեմատության են ենթարկվել «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ից առգրավված երթուղային թերթիկներում, գործուղման փաստաթղթերում և ավտոմեքենաների տեխսպասարկման հիման վրա կազմված փաստաթղթերը, այդ թվում՝ հանձնման-ընդունման արձանագրությունները: Զննության արդյունքում պարզվել է, որ տեխսպասարկման համար կազմված հանձնման-ընդունման արձանագրություններում նշված օրերին, երբ ավտոմեքենաները գտնվել են տեխսպասարկման կերում, նույն ավտոմեքենաների համար լրացվել են վազքեր ՀՀ տարբեր մարզերում, իսկ որոշ դեպքերում նույն ավտոմեքենաներով ձևակերպվել են գործուղումներ:

Նկատի ունենալով, ոև ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցների կողմից ստուգման վերաբերյալ կազմված ակտում արձանագրված արդյունքների ճշտությունը պարզելու և քննությանը հետաքրքրող մի շարք հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են դատահաշվապահական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55րդ, 243-244-րդ և 249-րդ հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 57107415 քրեական գործով նշանակել դատահաշվապահական և դատատնտեսագիտական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել փորձագետ ճանաչված, «Հույս և օրենք» ՍՊԸ-ի փորձագետներին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

1) 2012-14թթ.-ն ընկած ժամանակահատվածում «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերությունից ձեռք բերված էլիտային և սուպերէլիտային վերարտադրության աշնանացան ցորենի սերմացուի բաշխումը շահառուներին իրականացվել է արդյոք գործող իրավական ակտերին համապատասխան, թե ոչ, ծրագրի իրականացումը ծառայել է արդյոք նպատակին, թե չո, եթե ոչ, ապա ինչպիսի խախտումներ են թույլ տրվել, ով է դրանց համար պատասխանատու և այդ խախտումների հետևանքով պետությանը որքան վնաս է պատճառվել:

2) 2012թ.-ին «Սեմենա Ստավրոպոլյա» ընկերության հետ կնքված պայմանագրով նախատեսված սերմացուի մատակարարման ուշացման հետևանքով տույժի հաշվարկը ճիշտ է կատարվել, թե ոչ, դրա վճարման ուղղությամբ արդյոք ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ, թե ոչ, եթե ոչ, ապա ինչ խախտումներ են թույլ տրվել, ով է դրանց համար պատասխանատու և այդ խախտումների հետևանքով պետությանը որքան վնաս է պատճառվել:

3) 01.01.2012-31.12.2014թթ. ընկած ժամանակահատվածում ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին յուրաքանչյուր տարի ըստ ուղղությունների պետության կողմից որքան գումար է հատկացվել, այդ տարիների ընթացքում ըստ առանձին ուղղությունների ֆինանսական գործունեության ինչ խախտումներ են թույլ տրվել, ով կամ

ովքեր են այդ խախտումների պատասխանատուն և խախտումների արդյունքում որքան վնաս է պատճառվել պետությանը,

4) 01.01.2012-31.12.2014թ.-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին պետական բյուջեի միջոցների հաշվին որքան գումար է հատկացվել վառելիքի (բենզին, գազ) ձեռքբերման համար, դրա փաստաթղթավորումը կատարվել է գործող իրավական ակտերին համապատասխան, թե՝ ոչ, գումարն ամբողջությամբ ծախսվել ըստ ուղղությունների, թե ոչ, ծախսերն արտացոլված են արդյոք հաշվետվություններում կամ այլ փաստաթղթերում, թե՝ ոչ, եթե ոչ, ապա հաշվապահական բնույթի ինչխախտումներ են թույլ տրվել, ով է դրա պատասխանատուն և այդ խախտումների հետևանքով որքան վնաս է հասցվել պետությանը:

5) 2012թ.-ից մինչև 2014թ. ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում գործուղումների վերաբերյալ փաստաթղթերը կազմվել են արդյոք գործող իրավական ակտերին համապատասխան, թե ոչ, գործուղման հրամաններում որպես գործուղման վայր միայն համապատասխան մարզը կամ տարածաշրջանը նշելը՝ առանց կոնկրետ բնակավայրի նշման, գործող կարգի խախտում է, թե ոչ, եթե այո, ապա ով է դրա պատասխանատուն և այդ դեպքում արդյոք գործուղման ծախսը գործող կարգի համաձայն ենթակա է վճարման, թե ոչ:

6) 2012թ.-ից մինչև 2014թ. ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների կողմից գործուղումներ մեկնելը նպատակային են եղել, թե ոչ, գործուղումների համար հատկացված գումարների հաշվարկը կատարվել է գործող կարգին համապատասխան, թե ոչ, եթե ոչ, ապա հաշվապահական բնույթի ինչ խախտումներ են թույլ տրվել, ով է պատասխանատու դրա համար և այդ խախտումների հետևանքով որքան վնաս է պատճառվել պետությանը:

7) Գործուղման թերթիկների և այդ գործուղումների իրականացման նպատակով շահագործված ավտոմեքենաների ուղեգրերի համեմատական զննությամբ հայտնաբերված անհամապատասխանությունների հետևանքով որքան վառելիք է դուրս գրվել (հաշվարկման համար որպես խախտմամբ կազմված փաստաթուղթ մի դեպքում ընդունել գործուղման թերթիկի տվյալները, մյուս դեպքում՝ երթուղային թերթիկի տվյալները), դրա հետևանքով որքան վնաս է պատճառվել պետությանը և ով է դրա պատասխանատուն:

8) ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում 2012թ.-ից մինչև 2014թ. ՊՈԱԿ-ին ամրակցված քանի ավտոմեքենա է եղել, յուրաքանչյուր ավտոմեքենայի սպասարկման այդ թվում անվադողերի, մարտկոցների, յուղերի և այլ պահեստամասերի ձեռք բերման համար նախատեսված որքան գումար է ծախսվել ՊՈԱԿ-ի միջոցներից, ծախսերը կատարվել են նպատակային, թե՝ ոչ, դրանց վերաբերյալ փաստաթղթավորումը կատարվել է գործող իրավական ակտերին համապատասխան, թե՝ ոչ, բացի այդ դրանք արտացոլված են հաշվետվություններում կամ այլ փաստաթղթերում, թե՝ ոչ, եթե ոչ, ապա հաշվապահական բնույթի ինչ խախտումներ են թույլ տրվել, ով է դրա պատասխանատուն և այդ խախտումների հետևանքով որքան վնաս է հասցվել պետությանը:

9) ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին ամրակցված ավտոմեքեաների 2012թ.-ից մինչև 2014թ. ընկած ժամանակահատվածում տեխսպասարկման ենթարկվելու և նույն ավտոմեքենաների շահագործման վերաբերյալ կազմված երթուղային թերթիկի տվյալների համեմատական զննությամբ հայտնաբերված անհամապատասխանությունների հետևանքով վառելանյութի և տեխսպասարկման նպատակով առանձին առանձին վերցրած որքան գումար է դուրս գրվել (հաշվարկման համար որպես խախտմամբ կազմված փաստաթուղթ մի դեպքում ընդունել տեխսպասարկման համար կազմված կատարողական ակտի, մյուս դեպքում՝ երթուղային

թերթիկի տվյալները), դրա հետևանքով որքան վնաս է պատճառվել պետությանը և ով է դրա պատասխանատուն:

10) ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում 2012թ.-ից մինչև 2014թ. քանի աշխատակից է մեկնել արձակուրդ, քանի աշխատակից է հետ կանչվել արձակուրդից, ինչ հիմքով, վճարումները կատարվել են արդյոք ՊՈԱԿ-ի միջոցներից, արձակուրդի ընթացքում վառելիքի ծախսը եղել է նպատակային, թե՝ ոչ, փաստաթղթավորումը կատարվել է գործող իրավական ակտերին համապատասխան, թե՝ ոչ, ինչպես նաև դրանք արտացոլված են հաշվետվություններում կամ այլ փաստաթղթերում, թե՝ ոչ, եթե ոչ, ապա հաշվապահական բնույթի ինչ խախտումներ են թույլ տրվել, ով է դրա պատասխանատուն և այդ խախտումների հետևանքով որքան վնաս է հասցվել պետությանը:

11) ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում 2011-2013թթ և 2014թ. 1-ին եռամսյակն ընկած ժամանակաշրջանի համար իրականացված ստուգումը, որի հիման վրա 23.04.2014թ.-ին կազմվել է թիվ 24-Ա ակտը և նույն տեսչության կողմից ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում 2012-2014թթ. ընկած ժամանակաշրջանի համար իրականացված ստուգումը, որի հիման վրա 21.10.2016թ.-ին կազմվել է թիվ 17-Ա ակտը, կատարվել է արդյոք գործող կարգին համապատասխան, թե ոչ:

12) ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի աշխատակիցների կողմից ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ում 2010-2012թթ ընկած ժամանակաշրջանի համակարգի գնահատման աուդիտի արդյունքում կազմված աուդիտորական հաշվետվությունում 2012թ.-ի մասով ինչ խախտումներ են արձանագրվել, դրա արդյունքում որքան վնաս է հասցվել պետությանը, ով է դրա պատասխանատուն, ասուդիտն իրականացվել է արդյոք գործող կարգին համապատասխան, թե ոչ և արդյոք աուդիտի արդյունքում հայտնաբերված և արձանագրված վնասն ամբողջությամբ վերականգնվել է, թե ոչ:

3. Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այնպիսի հարցերի, որոնք թեև սույն որոշման մեջ առաջադրված չեն, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4. Փորձագետներին ըստ անհրաժեշտության տրամադրել թիվ 57107416 քրեական գործի նյութերը, ՀՀ ԳՆ «Սերմերի գործակալություն»ՊՈԱԿ-ից առգրավված հաշվապահական և այլ փաստաթղթերը:

4. Փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները: Միաժամանակ փորձագետին նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու, առանց քննիչի թույլտվության քննության տվյալները հրապարակելու համար, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Փորձագետին նախազգուշացնել նաև փորձաքննություն կատարելու համար նրան տրամադրված նյութերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հնարավոր պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ **Գ.Մանուկյան**